Աւարտեցաւ ածախաւս. մարդարէական եւ առաքելական հոգիաբուխս այս տառ ի թուականութեան հայկազեանս տումարի ՊՂԱ: ի հայրապետ. հայոց տն. Կիրակոսի: Եւ յաշխարհակալութեան. ըստ ներելոյն Այ. աբիւնարբու դաղանին Ջհանշահին: Զոր իբրեւ էառ զիշխանութիւն. եւ նստաւ յաթոռ առաջին աշխարհաշէն եւ բարէմիտ զանորէիցն սկսաւ սայ աւերել եւ տապալել զրաղում քաղաքս եւ զգաւառս եւ ամայի եւ անմարդաբնակ առնել, եւ ոչ ոք կարէ զչարութիւն. սորա ընդ դրով արկանել. առաւել եւս զոր արար ընդ աշխարհն Վրաց, ընդ քաղաքին Շամշուլտայ, զի խաբէութիւ. առ գնա եւ զամենեսեան ի սուր սուսերի մաշեաց, զի ըստ մարգարէին որ ասէ. ոչ ոք էր որ թաղէր զնոսա. այսպէս եւ սոքա անթիւք եւ անհամարք, քահանայք եւ աշխարհականք եւ զկանայս նոցա եւ զմանկունս ցրուեցին ընդ ամենայն աշխարհ: Եւ ով կարէ զաղէտ տարակուսանացս լեզուաւ պատմել: զոր եղեւ ի սոյն ամի ընդ ազգիս հայոց: Եւ ի սմին դառն եւ նեղ ժամանակի գրեցաւ գիրքս այս ի գաւառիս Արարատեան ի ձորս Քեղոյ ի վանքս Աղջոց ընդ հովանեաւ սբ. Աստանիս. եւ սբ. Կաթուղիկէիս եւ սբ. Ստեփանոս նահատակիս եւ Թրի սբ. Նշանիս եւ Արամունից սբ. խաչիս եւ Թեւատ սբ. Գրիգորիս եւ այլ բազմահաւաք սրբոցս որ աստ կան հաւաքեալ: Եւ է գրեալ սա ձեռամբ յոգնամեղի եւ անարհեստ եւ փցուն գրչի սուտանուն կրաւնաւորի անուամբ... (թուղթ ընկած).

Բայց 219ա. գրչի անունը կայ.

Զրազմամեղ եւ զփծուն գրիչս զԳալուստ աղաչեմ յիշել ի տր. եւ դուք յիշեալ.

ՑԱՒԵԼՈՒԱԾ Բ. 52.

(Փիրղալեմեանի)

1879 Մայիս 14ի Բարերդու եկեղեցեաց գրեանց:
1460 ՋԹ. թիւ 197 մի աւետարանէ:
Բ. Գրքի 155.

Փառք անճառելի եւ անսկիզբն բանին Աստուծոյ... որում ցանկացող եղեւ աստուածասէր եւ հոգեւոր այրն Ստեփաննոս, որ ստացաւ ի հալալ զանձուց եւ յարգար վաստակոց իւրոց զսուրբ եւ զաստուածաշունչ Աւետարանս: Եւ ետ զսա ի գեղաքաղաքն Գառնի ի դուռն սուրբ Կաթուղիկէ եկեղեցւոյ անջինջ յիշատակ իւրն ամենայն արեան առու մերձաւորացն: Արդ գրեցաւ սուրբ Աւետարանս ի թուականութեանս Հայոց ՋԹ (1460) ի հայրապետութեան տեառն տէր Գրիգորի ի յաթոռ սուրբ էջմիածնի: Եւ ի դանութեան Ջահան շահի որդոյ Ուսուֆի, որ զնաց ի Հրէ (1453 ՋԲ ամի) երկու հարիւր հազար հեծելով եւ եօթն տարի անդ կացեալ. եւ ի դուրս եկեալ բազում աւարաւ, գրեալ ձեռամբ յոգնամեղ եւ անարհեստ գրչի Վարդան արեղայի. այլ խաբեղայ եւ ոչ արեղայ, ի դառն եւ ի նեղութեան ժամանակի, որ Երերուն եւ տատանեալ ազգս Հայոց (կայ) ի ձեռն այլազգեաց անօրինաց եւ յանիրաւ պահանջողաց: Ի վանքս Աղջոց ընդ հովանեաւ սուրբ Ստեփաննոս նահատակիս եւ հրաշափառ սուրբ Կաթուղիկէ եկեղեցւոյս եւ սուրբ Աստուածածնիս եւ ամենայն սրբոցս, որ աստ հաւաքեալ կան:

ՑԱՒԵԼՈՒԱԾ Բ. 53.

Երեւանի Թանգ. No. 134/129. Բ. Գրքի 157

Աւետարան, փոքրադիր, արծաթապատ կազմով, մագաղաթ, նկարազարդ խորաններով, աւետարանիչների սկզբնազարդերով եւ լուսանցքի զարդերով: Գլուխների սկզբնագրերը թուշնագրերով. տների սկսուածքը ոսկի, լաւ բոլորգիր. եղել է ժամանակին շքեղ, բայց վատ է պահուած: Նկարչութիւնը կիլիկեան ոճով, միջակից բարձր:

Յովհաննու վերջում.

Փառք ամենասք. երրորդութեն. եռակի անձնաւորութեան. եւ եռակի տրութեան. հաւր եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն:

Որք ըմտաց աչս անաղաւտ եւ վիճտ (s!) ունիցին յանկաւոր զիտմամբ առ Եակաեն լոյս եւ իմանալեացն տեսարան. նոցին ոչինչ է փոյթ բովանդակ բնաւին ինչ որ յաշխարհի եւ որ ընդ հոսանուտ եւ եղծանելի բնութեաս. բերին, այլ միանգամայն ըղհուր սիրոյ, զոր հուրն կենդանի արկ ի բանական բնութիս. աւր ըստ աւրէ արծարծեն հոգիս անշիջանելի բորբոքմամբ հոգեւորացն տուր եւ առութ., որով եւ լուսաւորին ըստ բանի ածահայր. մարդարէին, որ ասէ, պատուիրանք տն. լոյս են եւ լոյս տան աչաց:

Արդ սէրն որ առ Աստ. է, անդնելի է մտաց մարդոյ, զի ինչ եւ իցէ իր որ յԱստ. հայի, ոչ կարէ դատել զնա ոք, զի ոչ անկանի ընդ քանակութիւ.: Երիս սէր է, զոր ստանան մարդիկք, զի է սէր, որ հաղեւոր է, զատ ի մարմնական սրաղմանց, եւ է սէր, որ հոգեւոր է եւ մարմնաւոր, եւ է սէր, որ ամենեւին մարմնաւոր, որ եւ մի լիցի ստանալ ումեք զնա. իսկ որք հոգեւորքն են, թէպէտ եւ մարմնաւոր լիցի սէրն, ոչ լիցի առանց մատանց հոգւոյ: Այլ եւ աստանաւր յիշեսցուք զերիցս երանեալ զքաջ հռետոր եւ բանիբուն զԴանիէլ վարդապն. Սեվանեցի, զոր ի վաղուց հետէ շարժեալ ի հոգւոյն սրբոյ, եղ ի մտի իւրում ըստանալ աւետարան փոքր տուի գեղեցկագիր եւ ըստուգաբան, լինել անջինջ յիշատակ իւր եւ ծնողաց եւ ազգականաց իւրոց: Զոր եւ ես Վարդան եպս. մեղապարտ ոգի անուամբ միայն եւ ոչ գործով, վասն խնդրոյ ճգնազգեաց եւ սրբասնեալ քաջ բարունոյն Դանիէլի ըմբեր տկարութի. մարմնոյ եւ ըստուտ ըզբաղումն եւ խարող աշխարհիս աստի կենացս ի բաց գնելով, ապաւինեցաք յԱստ. եւ ի միածին Յս. Քս. յորդին Այ. եւ առաջնորդութիւ. սբ. հոգւոյն եւ ձեռնտըվութիւ. նորին ըստ իմում կարի